

ՀԻՆ ԵՒ ՆԱԽՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.

Հարկ պատմութեանն.

Ասա զնախնի հին պատմութիւն
 Զանցից իրացն որ յերկնի. —
 Ըղթիսուսի, զփառաց նորուն,
 Եւ ըզսիրոյն Քրիստոսի:
 Ասասլիւր զայն քաղցրաձայնեալ,
 Ի՛բր իցեմ լեալ ես մանկիկ.
 Զի եմ տրկար և տըխատեալ,
 Եւ մինչ իսպառ աղքատիկ:
 Ըզվէպն ասա հանդարտաբար,
 Զի ընկալայց յիմ սիրտ զայն,
 Զըսանչելիսն հրաշափառ,
 Մեղաւորին մեծ դարման:
 Ըստէպ ասա ինձ առ երի,
 Զի պահել յուշ չեմ առաւ,
 Զէ սովոր ցօղն առաւօտի
 Տեւել քան զօր հասարակ:
 Ասա, ասա զայն քաղցրաբան,
 Հանդարտաձայն, հոգեպէս.
 Կարօտանամ ես փրկութեան,
 Եւ մեղաւոր եմ, գիտես:
 Ասասլիւր զայն յամէն վայրկեան,
 Թէ ինձ կամիս տալ յորդոր
 Ի վիշտս և ցաւս իմ բազմազան
 Քոյ հաւատովքըդ սովոր:
 Ինձ ասասլիւր ըզվէպն ինքնին,
 Եթէ երկիւղ քեզ իցէ՝
 Թէ առ իս փառքն աշխարհային
 Յոյժ ծանրազնի արժիցէ:
 Թէ ապիրատ փառք աշխարհի
 Վըրդովեսցէ զիմ հոգիս,
 Ո՛հ, ինձ ըզվէպն ասա նախնի.
 Ի Քրիստոսէ բուժեսցիս:

ՄԱՍՆ Բ.

Ճառք պատմութեանն.

Դու ցանդ հայցես ըզպատմութիւն
 Զանցից իրացն որ յերկնի,

Ըղթիսուսի, զփառաց նորուն
 Եւ ըզսիրոյն Քրիստոսի,
 Խընդրես ըզճառան հին և նախկին,
 Եւ չբաւէ ոչ ինչ այլ.
 Զեն ինչ զարմանք ամենեին.
 Միշտ մեզ թրւի նորափայլ:
 Յանգ փափաքեմ թէ դք զըտցի
 Ի պատմել զայն օր աւուր.
 Զէ ինձ երբեք ձանձրանալի
 Զըքնաղ իրացն հասեալ լուր:
 Այլ ժամանակըն կորընչի.
 Արդեօք զիմոյ ըսկըսայց
 Պատմել ըզճառսն վաղեմի,
 Որով զերծաք ՚ի մեղաց:
 Լուր, բարեկամ. քեզ ասացից.
 Տէր օժանդակ լիցի մեզ.
 Եւ արասցէ ըզբան վիպիս,
 Զիւրն ըզբարոզ, հաճոյ քեզ:

Երբեմն յաւուրց ՚ի զրախտ ուրեք
 Ըզզուարթ ամիս եդ Աստուած.
 Անդ ամենայնն եղև խաղաղ,
 Բնաւ ինչ չըքնաղ՝ զարմանս ած:
 Այլ եկաց մարդն անհընազանդ.
 Սիրեաց ըզպտուղն արգելեալ.
 Ո՛հ, էառ զայն և ճաշակեաց.
 Մահ եկն անդէն երեւեալ:
 Սակայն եցոյց Աստուածըն տէր,
 Ըստ իւր սիրոյն և շնորհաց,
 Թէ գոյր նըմին դեռ փրկութիւն,
 Թէպէտ կորուստ ժառանգեաց:
 Քանզի զաւակ ոմն Եւայի,
 Ինքն միայն սոսկ անպարտ,
 Եղծ յետոյ զգործ Սաղայելի.
 Զի տակաւին կեցցէ մարդ:
 Ինքն Ագամայ և՛ Աստուծոյ նախ
 Եկաց զաւակ սուրբ աստէն.
 Եւ զփրկութիւն երեք ըզմեծ
 Առ ՚ի մեղաց ու ՚ի դիւէն:

Հաղարամեան անցին աւուրք.
 Մեռաւ Ադամ և Եւայն.
 Եւ ընդ նոցուն զոյգ սերընդոց
 Հարիւրք և բիւրք իսկ կորեան:
 Մինչդեռ կային ականարկելով
 Ի հօտ խաշանցըն հովուաց,

Բմբրունեցան 'ի դիշերին
 Ի նորացոյց ինչ փայլմանց :
 Չըքնաղ հրեշտակ առ 'ի յերկնէ
 Բատորիջեալ այսր յաշխարհս ,
 Ըզթիսուսի եկն ըզսիրոյն
 Ըզհաւաստին պատմել ճառս :
 Ածեալ երբեր ըզմեծն համբաւ .
 « Բաւ ձեզ լինել յերկիւղի .
 Փըրկազործողն նորածին
 Անդ 'ի շինին զըտանի » :
 Այլք 'ի զուարթնոց ըզնոյն դիպուած
 Եկին պատմել ըզկրնի .
 Փառք 'ի բարձունքս Բարձրելոյն ,
 Խաղաղութիւն փայլեսցի :
 Առ հաւաստիս պատմեցելոյն
 Ի տեսանել զայն գնացին .
 Եւ ըզմըսուր զըտեալ անդէն ,
 Չինք տեսանել կարացին :
 Ի փըրկութիւն մեղաւորաց
 Նա եկն եհաս հուսկ յետոյ .
 Չոյգ ըստ խոստմանն յառաջագոյն
 Մեծի իւր հօրն երկնայնոյ :
 Յազատութիւն կորուսելոյն
 Նա շատացեալ լոկ տենչաց ,
 Թէպէտ կանուխ իսկ տեսանէր
 Չոր ինչ յապալսըն կըրեաց :
 Եկաց ըզկեանքս սըրբութեան .
 Խորհուրդ մըտացն եղև սէր .
 Չոր և մարդոյն և Արարչին
 Գնացիւքն իւրովք ցուցանէր :
 Իւր ըզբաղումն էր վաստակել .
 Աղքատութիւն՝ իւր պայման .
 Չիք առաւել ոք քան ըզնա
 Տառապանաց փորձական :

Մեծամեծ ամբն եղեն վերջինք .
 Չէր մարթ թաքչել գաղտակեաց .
 Չունիմ ես կար և ժամանակ
 Պատմել զոր ինքըն գործեաց :
 Չէր իւր արծաթ ամենեին ,
 Որով զայն տալ չըկարաց .
 Չհիւանդացեալսըն բըժըշկէր ,
 Մեռելոց կեանքս բաշխեաց :
 Առնել ըզքնաւ ինչ քաղցրութեամբ
 Իւրոյ սըրտին եղեն իղձք .
 Եւ սիրոյն կէտ նըպատակի ,
 Առնել զաղբատն երջանիկ :

Ըզնա պատրաստ միշտ տեսանէր ,
 Երբ յանդիման ոք երթայր .
 Թէպէտ խոնջեալ և զբաղական ,
 Միշտ զըտանէր հաւասար :
 Ունկըն մատոյց ցանգ մըտադիր
 Բոլոր ցաւոց և վըշտաց ,
 Թեթեացոյց ըզբեռն համայն
 Զանգիտութեան և մեղաց :
 Սակայն էր այր տառապանաց :
 Թէ ինչ ըզգիւր տալ կամէր ,
 Տայր զայն զըթով եղբայրապէս ,
 Զի զհամբերելն գիտէր :

Այսպէս էր մարդն Յիսուս Քրիստոս ,
 Բուն բարեկամ յանցողաց ...
 Այլ ոչ է շատ . կենացն իւր ճառք
 Տացեն 'ի սիրտ մեր հարուած ...

Առանց յանցման և արատոյ
 Յիսուս սիրուն և բարի ,
 Բմբրունեցաւ յապիրատից ,
 Եւ խաչեցաւ ըզկրնի :
 Հայեաց , հայեաց , եթէ կարես ,
 Բօրհասականն 'ի քոյգ Տէր .
 Գառնն աւաղիկ և մեր փըրկիչ
 Կայ անդ խաչին առնթեր :
 Ըզձեռսն և զոտսըն ծակեցին .
 Թաքչել նըմին չիք հընար .
 Կան շուրջ մարդիկն անագորոյնք .
 Իշխեաց հայել յինքն այր այր :
 Հրաւէր ետուն գալ իջանել ,
 Ծիծաղելով հեգնակի ,
 Եւ ասէին ըզխաչըն զայն
 Փոխանակել ընդ թագի :
 Աբանչելազօր Աստուածըն տէր
 Անարգեցաւ , համբերեաց .
 Չայն բարբառոյն սոսկ ըզնոսին
 Կարէր ջընջել . այլ կըրեաց :
 Այո , Յիսուս կարող էր յայն ,
 Այլ հեշտ է ինձ ասել քաջ
 Ըզչկամելոյն իւրոյ պատճառս ,
 Եւ լինելոյ ընդ մահն հաճ :
 Եղև առ մեզ պատըսպարան ,
 Եւ տալ ընդ մեր հաճեցաւ
 Չոր մեզ անմարթ է բընաւին
 Հատուցանել արժանեալ :

Կամեցաւ կրել նա վասըն մեր,
Եւ վասըն մեր ետ ըզկեանս.
Եւ ոչ առ մեր սոսկ յանցանաց,
Այլ առ բնաւից էառ ցաւս:
Արդ կատարումն եհաա գործոյն.
Բարձումն եղև խիստ պարտեաց.
Մինչդեռ անձին պահեաց Քրիստոս
Ըզմեղս համայն մահացումաց:
Ո՛վ հնարք դեղոյ վասն յանցումաց,
Եւ փրկութիւն դերազանց.
Արդ հանապազ դրախտին վերնոյ
Ամենեցուն դրուէր են բաց:
Թորժամ վախճան եհաա գործոյն,
ԶՅիսուս կոչեաց Տէր առ իւր.
Եւ յարութեամբն Քրիստոսի՝
Այլ ևս առնել ինչ չըզոյր:
Քրիստոս փառօք յաղթանակաւ
Եւ մինչ յերկին վերամբարձ.
Անդ ինքն իշխան և կեցուցիչ
Յանկայ իւրոց սիրելեաց:

Ապա թողեալ զիւր ժողովուրդ,
Յըզել առ նա խոստումն ետ
Զիւր սուրբ Հոգին 'ի մըխիթար,
Եւ իւր կենաց կարապետ:
Ինքնին իսկ նոյն Հոգին այն սուրբ
Եւս և այսօր ընդ մեզ գոյ.
Ուսուցանել մեզ կայ պատրաստ
Զուզին հորդեալ յԱստուծոյ:

Այս է ահա դիպումսն այն հին:
Ամփոփես զայն 'ի սիրտ քոյ.
Իցեն ինչ հրաշքն փրկութեան
Մեղաւորին հնար դեղոյ:
Ընդունիցիս զայն իբր ըստոյգ.
Քոյով սըրտիւդ հաւատաս.
Քեզ իսկ ինքնին պատմեցի զայն
Եւ յանցողաց առ բնաւ դաս:
Ե՛կ ընկալիւր ըզփրկութիւն
Զոր Յիսուսին սէր բաշխեաց.
Թէ հաւատաս, ըստացիր զայն,
Յայնժամ հասցես դու կենաց:
Զի թէ միայն քարոզն այն սոսկ
Ած քեզ զանդոյր հաշտութեան,
Ըզհին դիպումսն պատմեցիւր
Ամենեցուն որ ցանկան:

Քի յայտ տեսցեն ամենեքին
Թէ Յիսուսիւ փրկեցար.
Եւ ասացես դու համայնից.
Քրիստոս քոյ վասն եկն յաշխարհ:

Վաղ իսկ և փոյթ տեսցուք ըզնա,
Ըզնա տեսցուք անդ յերկին,
Եւ երգեսցուք ըզհինն այն վէպ
Որ ըզսիրոյ Յիսուսին:

Թարգմ. Հ. ՍԱՄՈՒԷԼ ԿԵՍԱՐԵԱՆ:

ՄՈՎՍԷՍ

ՄԻՔԵԼԱՆՃԵԼՈՅԻ

1505 տարւոյն սկիզբները Միքելան,
ճելոյ Պուոնարոզդի հազիւ 29 տարեկան
էր. բայց արդէն գերահռչակ համբաւ
ստացեր էր իր Տիրամայր Գթոքեան
և Դաւիթ արձանին համար, որ հսկա-
յաձև կ'երևայ 'ի Փլորենտիա, իշխա-
նաց պալատին առջև: Այն ժամանակ
երկու տարի է 'ի վեր քահանայապետա-
կան գահին վրայ կը բազմէր Յուլիա-
նոս Տէլլա Ռովերէ, որ առաջ Ս. Պե-
տրոսի կապանաց եկեղեցւոյն ծիրանա-
ւորն էր, և յետոյ Յուլիոս Բ պապ ա-
նուանեցաւ, և որ ինչպէս ուրիշ բանե-
րու՝ նոյնպէս նաև փափաքող էր գեղա-
րուեստից պայծառութեամբ իր քահա-
նայապետութիւնը հռչակելու: Յուլիա-
նոս Սան Կալլոյ, անուանի ճարտարա-
պետը, պապին աչքն ու սիրտը Պուո-
նարոզդեայ նորափայլ մեծութեանն վը-
րայ դարձուց. և պապն ալ բնաւ չդան-
դաղեցաւ զինքը կանչելու և 'ի Հռովմ'
քովը պահելու, ուր Միքելանճելոյ դա-
տարկ ժամանակ կ'անցընէր, մինչդեռ
Յուլիոս Բ մտքէն կ'որոճար թէ ինչպի-
սի գործ յանձնէ այն մեծ արուեստա-
ւորին: Վերջապէս որոշեց յանձնել ի-
րեն հսկայագործ շիրմի մը գծագիրը,
զոր միտք ունէր իրեն համար կան-
գնելու: